ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/12

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Դալլաքյանի (լիազորագիր՝ տրված 16.01.2019թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/543-2021 գրությամբ «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 18.01.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/101-2021 գրության հիման վրա

19.01.2021թ. թիվ 26/26-1/543-2020 գրությամբ նախաձեռնել է «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 21.01.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը 10/12/2020թ. շինանյութերի ձեռքբերման նպատակով էլեկտրոնային գնումների Armeps համակարգում (նաև գնումների պաշտոնական տեղեկագրում) հրապարակել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտարարությունը և հրավերը (այսուհետ՝ Հրավեր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ մերժվել է «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու պատճառով:

Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի «գնանշման հարցման ընթացակարգի հայտը պատրաստելու» հրահանգի 1-ին կետով ներկայացված «ընդհանուր դրույթներ» բաժնի 1.2 կետի համաձայն՝ նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն *հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝* պահպանելով պահանջվող վավերապայմանները:

«ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտում Հրավերի հավելված 1.1-ով ներկայացված աղյուսակի «անվանումը» դաշտում թյուրիմացաբար նշվել է ոչ թե «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, այլ ընկերության անվանումը /հավելված 1.1-ը կցվում է/:

Հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանությունը և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել այն:

«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և ներկայացրել հավելված 1.1-ը հրահանգով առաջարկվող ձևից տարբերվող՝ այլ ձևով՝ /իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը նշել է «տեխնիկական բնութագրերը» դաշտում/ պահպանելով պահանջվող վավերապայմանները /հավելված 1.1-ը կցվում է/:

Այսինքն, արդյունքում «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է անհամապատասխանությունը, այն է վերջինս ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և միայն այն հանգամանքը, որ «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը չի նշել «անվանումը» դաշտում, այլ նշել է «տեխնիկական բնութագրերը» դաշտում, կարծում ենք, որ հիմք չի հանդիսանում «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն բավարարել է Հրավերի պահանջը և հետևաբար առկա չեն հիմքերը «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար»:

«ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/12 ընթացակարգի շրջանակներում 27.01.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.01.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/101-2021 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստում «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ և «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ն սահմանված կարգով ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

«ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին չբավարարող /անբավարար/ և հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը որոշել է «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/12 ընթացակարգի շրջանակներում 27.01.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/12 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/12 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, սահմանվել է հետևյալ տեսքով.

Հավելված 1.1
ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2 ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ
առաջարկվող ապրանքի ամբողջական

մասնակցի անվանումը_____-ն **ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	անվանումը	տեխնիկական բնութագրերը

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.12.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի հրավերով 15-րդ չափաբաժնի անվանումը

սահմանվել է «էլեկտրոդներ (էլեկտրոդներ 4մմ)», սակայն «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, որպես 15-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի անվանում նշվել է «ՍԴԴ», ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

4. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը /29.12.2020թ./ շտկել անհամապատասխանությունները:

5. Ընկերության կողմից Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, շտկվել է և ներկայացվել հետևյալ տեսքով.

Հավելված 1.1
ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2 ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ
առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չ/Հ	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանում	Ապրանքային նշան	մակնիշը	Արտադրողի անվանումը	Տեխնիկական բնութագրերը
15	ՍԴԴ	ՍԴԴ		NAHAVIWEL IOINE STOCK COMPANY	Էլեկտրոդներ (էլեկտրոդներ 4մմ) Տրամագիծը 4մմ, ածխածնային պողպատների զոդման համար, փոփոխական հոսանքի, 5կգ-ոց փաթեթներով, չոր, փաթեթի վրա նշված լինի արտադրման ժամկետ և առնվազն մնացորդային 1 տարվա պահպանման երաշխիքային ժամկետով համաձայն ԳՕՍՏ 9466-75

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ 30.12.2020թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի կողմից՝ շտկված փաստաթղթում, չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը՝ չի նշվել ապրանքի անվանումը, փոխարենը ներկայացվել է

ապրանքի՝ ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն, ինչը սակայն հրավերով չի պահանջվում, արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/543-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.01.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/101-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, սահմանվել է հետևյալ տեսքով.

Հավելված 1.1
ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2 ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ
առաջարկվող ապրանքի ամբողջական

մասնակցի անվանումը_____-ն **ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	**Առաջարկվող ապրանքի**	
	անվանումը	**տեխնիկական բնութագրերը**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.12.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի հրավերով 15-րդ չափաբաժնի անվանումը սահմանվել է «էլեկտրոդներ (էլեկտրոդներ 4մմ)», սակայն «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի կողմից

առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, որպես 15-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի անվանում, նշվել է «ՍԴԴ», ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը /29.12.2020թ./ շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 28.12.2020թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընկերության կողմից Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, շտկվել է և ներկայացվել հետևյալ տեսքով.

Հավելված 1.1
ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2 ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ
առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չ/Հ	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանում	Ապրանքային նշան	մակնիշը	Արտադրողի անվանումը	Տեխնիկական բնութագրերը
15	ՍԴԴ	ՍԴԴ		NAHAVIWEL IOINE STOCK COMPANY	***<u>Էլեկտրոդներ (էլեկտրոդներ 4մմ)</u>*** Տրամագիծը 4մմ, ածխածնային պողպատների զոդման համար, փոփոխական հոսանքի, 5կգ-ոց փաթեթներով, չոր, փաթեթի վրա նշված լինի արտադրման ժամկետ և առնվազն մնացորդային 1 տարվա պահպանման երաշխիքային ժամկետով համաձայն ԳՕՍՏ 9466-75

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ 30.12.2020թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի կողմից՝ շտկված փաստաթղթում, չի շտկվել արձանագրված

անհամապատասխանությունը՝ չի նշվել ապրանքի անվանումը, փոխարենը ներկայացվել է ապրանքի՝ ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն, ինչը սակայն հրավերով չի պահանջվում, արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Այսպիսով՝ Հրավերի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, նախատեսվել է, որ պետք է նշվեն չափաբաժնի համարը, առաջարկվող ապրանքի անվանումը, այն է՝ Էլեկտրոդներ (էլեկտրոդներ 4մմ), և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, մինչդեռ, ինչպես արձանագրվել է թիվ 5 արձանագրությամբ, Ընկերության կողմից ներկայացված շտկված Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ չի նշվել ապրանքի անվանումը, փոխարենը նշվել է ապրանքի՝ ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն:

Հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերության կողմից ներկայացված շտկված Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերության կողմից ոչ միայն ներկայացվել է ավելի մանրամասն տեղեկատվություն, այն է՝ ապրանքի՝ ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն, այլ նաև տեխնիկական բնութագրեր դաշտում առաջին տողով (առանձնացված ձևով) հստակ նշված է ապրանքի անվանումը, այն է՝ ***Էլեկտրոդներ (էլեկտրոդներ 4մմ):***

Այսպիսով՝ պետք է փաստել, որ Ընկերության կողմից ըստ էության նշվել է ապրանքի անվանումը, պարզապես այլ՝ տեխնիկական բնութագրեր, դաշտում (որը հանդիսանում է առաջարկվող ապրանքի ենթաբաժին), այսինքն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված առաջարկվող ապրանքի համար անհրաժեշտ տեղեկատվությունն ամբողջությամբ պարունակում է Ընկերության կողմից ներկայացված շտկված Հավելված 1.1-ը, հետևաբար, Ընկերության հայտի թիվ Հավելված 1.1-ի այս կերպ լրացված լինելու պայմաններում, գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը կրում է ձևական բնույթ և այն չի կարող հանգեցնել Ընկերության նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության կիրառման:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/543-2019 գրությամբ «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**